

5.4. 2012 թվականի ապրիլ ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մշտադիտարկում

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության շրջակա բնական միջավայրը 2012թ. ապրիլին ունեցել է հետևյալ բնութագիրը.

5.4.1. Օդային ավազանի որակի մշտադիտարկում: Ապրիլին հանրապետության մթնոլորտի աղտոտվածության որակի մշտադիտարկում իրականացվել է Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան և Արարատ քաղաքներում տեղակայված 14 դիտակայանների, Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Ծաղկաձոր, Վաղարշապատ, Աբովյան և Սևան քաղաքներում տեղակայված պասիվ նմուշառման 144 դիտակետերի, Երևան, Ալավերդի, Ծաղկաձոր քաղաքներում և Ամբերդ գյուղում տեղակայված ավտոմատ կայանների միջոցով: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 54580 փորձանմուշ:

Երևան քաղաքի մշտական 5 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 422 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 2.4 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 3.6 անգամ: Քաղաքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ավտոմատ կայանների միջոցով որոշվել են ածխածնի մոնօքսիդի, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 18191, ծծմբի երկօքսիդի համար՝ 10825, ազոտի օքսիդների համար՝ 1597, գետնամերձ օզոնի համար՝ 280 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքերի տվյալների, մթնոլորտային օդի փորձանմուշներում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 3.1 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 14 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 55 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Գյումրի քաղաքի մշտական դիտակայանում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 23 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.6 անգամ: Մարտ ամսվա համեմատությամբ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.1 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 240 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Վանաձոր քաղաքի մշտական 3 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 180 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 238 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.5 անգամ:

Ալավերդի քաղաքի մշտական 2 դիտակայաններում, ինչպես նաև ավտոմատ կայանում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 180 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 5136, ծծմբի երկօքսիդի համար՝ 5137, ազոտի օքսիդների համար՝ 835 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 3.2 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 18 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 180 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.3 անգամ:

Հրազդան քաղաքի մշտական դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 69 փորձանմուշ: Մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական և միանվագ առավելագույն կոնցենտրացիաները ՍԹԿ-ն գերազանցել են 2.2-ական անգամ: Մարտ ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.7 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 12 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 59 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Արարատ քաղաքի մշտական դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 29 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.1 անգամ:

Ծաղկաձոր քաղաքի պասիվ նմուշառման 14 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 70 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 4524, ազոտի օքսիդների համար՝ 803, ծծմբի երկօքսիդի համար՝ 4466 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Վաղարշապատ, Աբովյան և Սևան քաղաքների պասիվ նմուշառման համապատասխանաբար 16, 12 և 10 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 104, 84 և 30 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Ամբերդ գյուղում ավտոմատ եղանակով վերցվել է օդի 82 և փոշու 30 փորձանմուշ: Օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլոր, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 քիմիական տարրերի պարունակությունները: Մթնոլորտային օդում գետնամերձ օգոնի պարունակության որոշման համար անընդմեջ ռեժիմով կատարվել է 711 դիտարկում: Ազոտի երկօքսիդի

և ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

5.4.2. Մակերևութային ջրերի որակի մշտադիտարկում: Ապրիլին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 39 գետերի, Արփիլճի, Ախուրյանի, Ապարանի, Ազատի, Կեչուտի ջրամբարների, Երևանյան և Սևանա լճերի 113 դիտակետերում: Վերցված 122 փորձանմուշներում որոշվել է 19-ական ցուցանիշ:

Մակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը, 2012թ. ապրիլ

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները					
			լուծված թթվածին, մգ/դմ ³	ԹԿՊ, մգ/դմ ³	ԹՔՊ, մգ/դմ ³	նիտրիտ իոն, մգN/դմ ³	ամոնիում իոն, մգN/դմ ³	սուլֆատ իոն, մգ/դմ ³
Փամբակ	1	Հարթագլուղ գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	0.034	-	-
	2	ք.Սալիտակից 0.5 կմ ներքև	-	-	-	0.068	2.564	-
	3	ք.Վանաձորից 0.6 կմ վերև	-	-	-	0.080	0.465	-
	4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	-	3.3	-	0.051	-	-
Դերեղ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	-	3.6	-	0.053	-	-
	6	ք.Արումից 0.5 կմ վերև	-	3.6	-	-	-	-
	7	ՀՀ պետական սահմանի մոտ	-	3.4	-	0.026	-	-
Ձորագետ	10	Գետաբերան	-	3.7	-	0.031	-	-
Տաշիր	11	Միխայելովկա գյուղից 0.5 կմ վերև	-	4.2	-	-	-	-
	12	Մարատովկա գյուղից 0.5 կմ ներքև	-	3.4	-	-	-	-
Ախթալա	14	Գետաբերան	-	-	-	0.067	-	-
Աղստև	15	ք.Դիլիջանից 1.2 կմ վերև	-	3.8	-	-	-	-
	16	ք.Դիլիջանից 0.5 կմ ներքև	-	4.7	-	-	-	-
	17	ք.Իջևանից 1 կմ վերև	-	3.8	-	-	-	-
	18	ՀՀ պետական սահմանի մոտ	-	3.3	-	-	-	-
Գետիկ	19	ք.Ճամբարակից 0.5 կմ վերև	-	3.2	-	-	-	-
	20	Գետաբերան	-	3.8	-	-	-	-
Արաքս	25	Մուրմալու գյուղի դիմաց	-	-	-	0.039	-	-
	29	ք.Ազարակից 2 կմ հարավ	-	4.2	52	0.050	-	127.19
	30	ք.Ազարակից 2.5 կմ հարավ-արևելք	5.1	5.2	40	0.045	-	130.74
Ախուրյան	31	Ամասիա գյուղից 0.5 կմ վերև	-	3.2	38	-	-	-
	32	Ամասիա գյուղից 1 կմ ներքև	-	-	-	0.052	1.563	-
	33	ք.Գյումրիից 0.8 կմ վերև	-	3.9	-	-	-	-
Աշոցք	36	Արտաշեն գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	0.726	2.081	-
	37	Գետաբերան	-	4.6	-	-	-	-
Կարկաչուն	38	Գետաբերան	-	3.8	-	-	-	171.73
Սևջուր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	-	3.9	64	0.095	-	256.9
	41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	-	-	-	-	-	256.71
	42	Ռանչապար գյուղից 0.5 կմ ներքև	-	3.8	38	0.116	9.143	207.6
Քասախ	44	ք.Ապարանից 0.5 կմ ներքև	-	3.9	-	0.033	-	-
	45	ք.Աշտարակից 1 կմ վերև	-	3.9	-	-	-	-
	46	ք.Աշտարակից 3.5 կմ ներքև	-	4.1	-	0.080	0.469	-
	47	Գետաբերան	-	3.5	-	0.071	1.097	-
	50	Փարաի գյուղից 0.5 կմ ներքև	-	3.7	-	-	-	-
Հրազդան	53	Արգել գյուղից 0.5 կմ ներքև	-	3.3	-	-	0.452	-
	55	Դարբնիկ գյուղի մոտ	-	4.5	-	0.118	3.820	-
	56	Գետաբերան	5.6	-	-	0.037	1.440	122.2
Մարմարիկ	58	Գետաբերան	-	4.0	-	-	0.948	-
Գետառ	59	Գետաբերան	-	4.1	38	-	-	-
Մասրիկ	62	Վերին Շորժա գյուղից 0.5 կմ վերև	-	3.2	-	-	-	-
	63	Գետաբերան	-	3.4	-	-	-	-
Սոթք	64	Հանքավայրից 0.5 կմ վերև	-	3.5	-	-	-	-
	65	Գետաբերան	-	3.2	-	-	-	-
Կարճաղբյուր	67	Գետաբերան	-	4.2	-	-	-	-

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները					
			լուծված թթվածին, մգ/դմ ³	ԹՎՊ, մգ/դմ ³	ԹՔՊ, մգ/դմ ³	նիտրիտ իոն, մգN/դմ ³	ամոնիում իոն, մգN/դմ ³	սուլֆատ իոն, մգ/դմ ³
Արփա-Սևան ջրատար	68	Ծովինար գյուղից 0.7 կմ վերև	-	3.3	-	-	-	-
Վարդենիս	69	Վարդենիկ գյուղից 0.5 կմ վերև	-	3.5	-	-	-	-
Շողվակ	76	Գետաբերան	-	3.3	-	-	-	-
Գավառագետ	78	Գետաբերան	-	4.4	-	-	-	-
Արփա	83	ք.Ջերմուկից 0.5 կմ վերև	-	-	38	-	-	-
	84	ք.Վայքից 0.5 կմ վերև	-	-	-	-	1.678	-
	87	Արենի գյուղից 0.5 կմ ներքև	-	3.6	-	-	-	-
Մեղրիգետ	90	Գետաբերան	-	3.2	-	0.027	-	-
Ողջի	92	ք.Քաջարանից 1.8 կմ ներքև	-	-	-	0.046	0.478	-
	93	ք.Կապանից 0.8 կմ վերև	-	-	-	0.304	0.426	-
Արծվանիկ	96	Գետաբերան	-	-	-	-	-	242.17
Որոտան	99	Գորայք գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	0.032	-	-
Միսիան	104	Գետաբերան	-	-	44	0.407	0.657	-
Գորիսգետ	106	ք.Գորիսից 3 կմ վերև	-	3.2	56	-	-	-
	107	ք.Գորիսից 1.5 կմ ներքև	-	5.0	-	-	-	-
Արփիլճի ջրամբար	109	Ամբարտակի մոտ	-	3.4	-	0.447	5.402	-
Ախուրյանի ջրամբար	110	Ամբարտակի մոտ	-	-	46	-	1.072	-
Ապարանի ջրամբար	111	Ամբարտակի մոտ	-	4.0	-	-	-	-
Երևանյան լիճ	112	Ամբարտակի մոտ	-	4.4	48	0.096	10.015	-
Ազատի ջրամբար	113	Ամբարտակի մոտ	-	4.5	46	-	-	-
Կեչուտի ջրամբար	114	Ամբարտակի մոտ	-	3.4	-	-	-	-
Սևանա լիճ	115	Թերակղզուց 3.5 կմ դեպի արևելք	-	-	38	-	-	-
	116	Թերակղզուց 70° ազիմուտով	-	-	32	-	-	-
	119	Շորժա գյուղից 6 կմ հարավ-արևմուտք, մակերևույթից	-	3.6	-	-	-	-
	120	Արտանիշ գյուղից 2 կմ 135° ազիմուտով, մակերևույթից	-	3.2	32	-	-	-
	121	Փամբակ գյուղից 10 կմ 270° ազիմուտով, մակերևույթից	-	3.5	-	-	-	-
	122	Փամբակ գյուղից 2.2 կմ 255° ազիմուտով, մակերևույթից	-	-	32	-	-	-
	124	Մասրիկ գետի գետաբերանի շրջանում	-	3.8	50	-	-	-
	125	Կարճաղբյուր գետի գետաբերանի շրջանում	-	3.4	32	-	-	-
	126	Արփա-Սևան ջրատարի ելքի մոտ	-	3.2	32	-	-	-
	128	Երանոս գյուղից 15 կմ 90° ազիմուտով, մակերևույթից	-	3.5	-	-	-	-
	129	Երանոս գյուղից 24 կմ 90° ազիմուտով, մակերևույթից	-	-	32	-	-	-
130	Նորաղուս գյուղից 7 կմ հյուսիս-արևմուտք	-	3.2	-	-	-	-	